ՄԻԱՍՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ
2025

ՀՈՒԼԻՍ

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ
ԵՎ
ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ԹԵՍՏ 1

Խմբի համարը

Նստարանի համարը

Հարգելի՛ դիմորդ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդա՛ յուրաքանչյուր առաջադրանք: Եթե չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող ես դրան անդրադառնալ ավելի ուշ:

Թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը կարելի է օգտագործել սևագրության համար:

Ուշադի՛ր եղիր պատասխանների ձևաթուղթը լրացնելիս.

- ընտրովի պատասխանով առաջադրանքներում քո ընտրած տարբերակի համարին համապատասխանող վանդակում դի՛ր X նշանը (միևնույն սյունակի մեկից ավելի վանդակներում ցանկացած նշում կհամարվի սխալ),
- 33-38-րդ և 67-69-րդ առաջադրանքներում՝ յուրաքանչյուր առաջադրանքի համապատասխան համարների տակ, դի՛ր X նշաններ:

Մաղթում ենք հաջողություն:

Ա մակարդակ

1 **Ո՞ր շարքի բոլոր բառերում է գրվում փակագծերում նշված տառը:**

1) թառան-, պ-ռանք, ճաճան-, փ-ակ **(չ)**
2) ա-ճատել, գա-թել, կ-տար, ո-կույզ **(ղ)**
3) ժու-կալ, դ-խեմ, խո-ռռվել, խա-նարած **(ժ)**
4) ա-բարիշտ, ա-փոփոխ, բա-բասանք, ա-պամած **(մ)**

2 **Ո՞ր շարքի բոլոր բառերի բաղադրիչներն են գրվում անջատ:**

1) գլուխ(գործոց), հետ(մնալ), հարյուր(հազար)
2) ի(հեճուկս), առ(այն), դեմ(դիմաց)
3) միտք(անել), հենց(որ), իրար(անցում)
4) ըստ(իս), տնե(տուն), թույլ(տալ)

3 **Ո՞ր շարքի բոլոր բաղադրյալ հատուկ անունների բոլոր բաղադրիչներն են գրվում մեծատառով:**

1) ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱՌԱՔՅԱԼ, ԱՐԱԲԱԿԱՆ ՄԻԱՑՅԱԼ ԷՄԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԴԱՎԹԱԿ ՔԵՐԹՈՂ
2) ՇՎԵԴԻԱՅԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ, ՎԵՐԻՆ ԳԵՏԱՇԵՆ, ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ
3) ԱՌՅՈՒԾ ՄՀԵՐ, ԵԶՆԻԿ ԿՈՂԲԱՑԻ, ԱՐԾՐՈՒՆՅԱՑ ՏԻԿԻՆ
4) ԱԼԵՔՍԱՆԴՐ ԱՌԱՋԻՆ, ԽՆԿՈ-ԱՊԵՐ, ՄԵՐՁԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔ

4 **Ո՞ր շարքի բոլոր բառերի առաջին արմատն է միավանկ:**

1) հրկիզել, գրակալ, օրավարձ, քաղցրահամ
2) կայարանամերձ, թռչնորս, ձնագնդի, ցլամարտիկ
3) հպանցիկ, արձակագիր, գրադարան, թիավարել
4) գարեջուր, ուսանող, սրբազան, ձվաձև

5 **Ո՞ր շարքի բոլոր բառերում *ույ* երկհնչյունի հնչյունափոխություն կա:**

1) մրջնաբույն, վարագուրել, փութալ, անզգուշորեն
2) գուժկան, խուզարկու, անզուգադրելի, անբնական
3) ողջունել, բուրյան, գուշակ, թուլակազմ
4) կուտակել, կուսակից, դաշունահարել, լուսազգայուն

6 **Ո՞ր շարքում դարձվածքի իմաստի սխալ բացատրություն կա:**

1) **սառույցը շարժվել** - աղետ պատահել, **ձայն բարբառ հանապատի** -պատասխան չստացած խոսք
2) **տակից դուրս գալ** - ստանձնած գործը գլուխ բերել, **մազը գերան դարձնել** - չափազանցնել
3) **կաշին պլոկել** - ծայրաստիճան շահագործել, **շունը տիրոջը չճանաչել** - կարգուկանոն չլինել
4) **աչքերը կապել** - խորամանկությամբ խաբել, **խաղաթղթերը խառնել** - ծրագրերը խափանել

7 **Ո՞ր նախադասության մեջ փոխաբերական իմաստով գործածված բառ *չկա:***

1) Աղմկում է իմ սրտում ամեն գիշեր մի կարոտ, Աղմկում է որպես խուլ ու հեռավոր մի քամի:
2) Ապրելուց քաղցր է մեռնել քեզ համար, Զգալ, որ դու կաս, և լինել հեռու:
3) Կայծակի մտրակից խրտնած կարմիր մի նժույգ ծառս եղավ տեղից:
4) Հեռվից կապտավուն սարերն այնքան պարզ էին երևում, որ կարելի էր համրել նրանց բոլոր ձորակները:

8 **Տրված բառերից որի՞ արմատին *չի* կարող միանալ *առ-* նախածանցը և բառ կազմել առանց երկրորդ ածանցի:**

1) անցյալ
2) հավիտյան
3) երևույթ
4) աջլիկ

9 **Ո՞ր տարբերակի բոլոր բառազույգերն են կազմված հոմանիշներից:**

1) քիվ-բազրիք, գրավիչ-առինքնող
2) լաջվարդ-բոսոր, քծնող-շողոքորթ
3) անխափան-արդար, խորշակ-հողմ
4) անութ-թևատակ, անվեհեր-աներկյուղ

10 **Ո՞ր տարբերակում են ճիշտ նշված բոլոր այն բառերի համարները, որոնց բառակազմական վերլուծությունը ճիշտ է:**

1. թագադրում= թագ+ա+դ(ի)ր+ում
2. խորհրդակցում = խորհ+(ու)րդ+ա+կ(ի)ց+ում
3. բաժանմունք= բաժան+մունք
4. վայելչագրություն = վայել+(ու)չ+ա+գ(ի)ր+ություն
5. կառամատույց = կառ+ա+մատույց

1) 2, 3, 5
2) 1, 3, 4
3) 2, 4, 5
4) 1, 2, 4

11 **Ո՞ր նախադասության մեջ պատճառական բայ կա:**

1) Մի վայրկյան թվում է, թե խորհրդավոր այս կերտվածքը իսկույն կեթ լեզու է առնելու և ասելու, որ ինքը տեսել է հզոր փարավոններին, որոնք կառուցեցին վիթխարի բուրգերը:
2) Ձեր նշումներին ծանոթանալով՝ եզրակացրի, որ նախագիծը լուրջ շտկումների կարիք ունի:
3) Այս հեռագիրը տվել էր երևի նրա համար, որ այլևս չձանձրացնեմ իրեն նոր նամակներով ու հեռագրերով:
4) Երկար ժամանակ քարացած հայացքով նայում էր խավարի մեջ. հետո նրա պրկված դիմագծերն ասես թուլացան:

12 **Ո՞ր նախադասության մեջ մակբայ *չկա:***

1) Ես դուրս եմ գալիս՝ նորից շրջելու Նեղ փողոցներն ու կրկեսները բաց:
2) Եկան, ոռնացին սաղարթներիդ մեջ Ու ոլորելով, ճկելով հատ-հատ՝ Դալար ճյուղերդ փշրեցին, տարան:
3) Տխրությամբ նայում էի մերկ պատերին, շրջապատող աղքատությանը, այդ վերացած դեմքերին, և զարմանալի բան. թվում էր՝ կարծես երբևէ նրանք չեն եղել:
4) Զուր եմ փախչում, ինձ խաբում. Հազար կապ է ինձ կապում:

13 **Ո՞ր շարքում են ճիշտ նշված բոլոր այն բայերի համարները, որոնք չեզոք սեռի են:**

*Ես միշտ էլ էսպես անբախտ **1. կլինեմ:***
*Մանուկ օրից են դեռ ինձ **2. անիծել**...*
***3. Ասում են**՝ մի օր, ես՝ օրորոցում,*
*Մի պառավ դարվիշ մեր տուն **4. է գալիս**,*
*Իր խաղն ասում է ու բաժին **5. ուզում**,*
*Իմ նանը նրան բաժին **6. չի տալիս**:*
***7. -Կորի՛ր**,-ասում է,-կորի՛ր մեր դռնից,*
*Երեխաս **8. ճաքեց**, **9. հեռացի՛ր**, **10. գնա՛**...*

1) 2, 4, 5, 7, 9, 10
2) 1, 4, 7, 8, 9, 10
3) 1, 2, 3, 5, 6, 7, 8
4) 2, 3, 4, 6, 7, 9, 10

14 **Ո՞ր շարքի բոլոր բառերի հոգնակի թիվն է կազմվում *-եր* վերջավորությամբ:**

1) գծագիր, առանձնատուն, կաղնեփայտ, շնաձուկ
2) սառցաշերտ, հիմնապատ, մեղրամոմ, դեղաբույս
3) նախագիծ, որսաշուն, առակագիր, մեծատառ
4) տոնածառ, ակնաբիբ, ընդդիմախոս, որմնասյուն

15 **Ո՞ր շարքի բոլոր բառերն են ենթարկվում *ան* հոլովման:**

1) ձգտում, ազգանուն, շքաղուռ
2) բեռ, թոռ, հանգիստ
3) ծունկ, ամառ, անկյուն
4) լեռ, մանուկ, շարժում

16 **Ո՞ր նախադասության մեջ միջոցի անուղղակի խնդիր կա:**

1) Սամույրե մեծ օձիքով վերարկուն հագին՝ նա շրջում էր Սյունիքում՝ միջոցներ որոնելով աղետի դեմն առնելու համար:
2) Ես եկել եմ այն վերջնական եզրակացությանը, որ մարդիկ հիանում են իրենց չունեցած հատկություններով:
3) Եվ ահա այդ նպատակով էլ նա հասավ Հարանց հռչակավոր անապատ, ժողովեց այդտեղ կորովի մարդկանց, կազմեց միաբանություն:
4) Շահ-Աբասը սիրով լսեց նրա խնդրանքը, բոլոր հանգամանքների մասին տեղեկություն առավ նրանից, ապա մեծամեծ խոստումներ անելով կաթողիկոսին՝ եկավ Հայաստան:

17 **Ո՞ր նախադասության մեջ բացահայտիչից հետո ստորակետ պիտի դրվի:**

1) Հակոբին ճանապարհ դնելիս հայրս այդ ահեղ մարդն անգամ չկարողացավ զսպել արցունքները:
2) Ինձ դաշտային երկրի բնակչիս վրա լեռը որ շեշտակի բարձրանում էր հենց ստորոտից մի առանձնակի դյութական տպավորություն գործեց:
3) Ուխտյալ ժողովրդի զինվորագրվելը ճիշտ է հուսադրող էր բայց ինքը որպես հազար ու մի կրակի միջով անցած զորական մտահոգ էր ծայրաստիճան:
4) Մի օր Լոռուց Թիֆլիս եկավ իմ հին ուսուցիչը Տիգրան Տեր-Դավթյանը դիտելու Շեքսպիրի «Համլետ» ողբերգությունը:

18 **Տրված պարզ (դերբայական դարձվածով) նախադասություններից ո՞րն է սխալ փոխակերպված բարդի:**

1) *Թշնամուց ճշմարտություն ակնկալողը կանխավ հավատում է ստին:*
   Ով թշնամուց ճշմարտություն է ակնկալում, կանխավ հավատում է ստին:
2) *Ես հետ էի նայում մերձավորներից բաժանվող աքսորականի նման:*
   Ես հետ էի նայում աքսորականի նման, որ բաժանվում է մերձավորներից:
3) *Վերջացնելով իր սովորական աղոթքը՝ տատս ներքնակի տակից դուրս բերեց մի փոքրիկ կապոց:*
   Երբ վերջացրեց իր սովորական աղոթքը, տատս ներքնակի տակից դուրս բերեց մի փոքրիկ կապոց:
4) *Նրա կարծիքով անընդհատ տեղափոխություններիս պատճառը գեղեցիկ տանտիրուհի փնտրելս էր:*
   Նրա կարծիքով անընդհատ տեղափոխվում էի, որովհետև գեղեցիկ տանտիրուհի էի փնտրում:

19 **Ո՞րն է բարդ նախադասություն:**

1) Այգու խոտերին սփռված դեղնագույն դեղձերն ու ծիրանները, արծաթագույն տանձերը, իրար խառնվելով, գույների քմահաճ ներդաշնակությամբ հիշեցնում էին Սպահանի զմայլելի գորգերը:
2) Կաքավաբերդի գլխից ամպը հսկա խխունջի պես սողաց դեպի վրանները, խոնավություն կաթեց քարերի վրա:
3) Ես, խոսելով Փարիզի՝ այն ժամանակվա հայ գաղութի մասին, չեմ կարող մոռացության տալ իմ հայրենակիցներին՝ ժամանակավոր այցելուներին՝ մի քանի ամսով Փարիզ եկած:
4) Երբեք մենք միանգամից չենք հաշտվում մեր գլխին եկած չարիքի հետ՝ մեր սնոտի հույսերը, պարզ է, դնելով նույնիսկ աներևակայելի հրաշքների վրա:

20 **Ո՞ր տարբերակում ստորոգելի ստորադաս նախադասություն կա:**

1) Ես նա եմ, հենց նա, Ով մարդկանց մերժել չի կարողանում:
2) Նրա միակ ցանկությունն էր, որ որդին բարձրագույն կրթություն ստանար:
3) Իմ ուզածն էր այն, որ նա միշտ ինձ հետ լինի:
4) Արդյոք ատելուց չէ՞, որ այսքան շատացել են դառնությունները:

21 **Ո՞րն է տրված նախադասության գծապատկերը:**

Նա, ով չոքել էր գետնին ու ծնոտը հենել ցանկապատին, կանգնեց անսպասելի, լարվածությունից քրտնեց՝ ճգտելով հիշել, թե ինչու ոտքի ելավ:

1) 

2) 

3) 

4) 

22 **Ո՞ր տարբերակը տեղադրելու դեպքում քերականորեն և տրամաբանորեն ճիշտ նախադասություն կստացվի:**

....., ամեն ինչ ներկայացնում էր առասպելական ասացողի երևակայությամբ:

1) Որևէ բան պատմելիս
2) Չնայած որևէ բան էր պատմում
3) Երբ որևէ բան էր պատմում
4) Որևէ բան պատմելու ժամանակ

23 **Պատկերավորման-արտահայտչական ո՞ր միջոցը գործածված *չէ:***

Այնպե՜ս գգվող է երեկոն անափ,
Ծաղիկներն այնպես նազով են փակվում.
Շուրջս վառված է մի անուշ տագնապ,
Մի նոր հուզում է սիրտս մրրկում….

1) շրջադասություն
2) մակդիր
3) փոխաբերություն
4) համեմատություն

24 **Ո՞ր ստեղծագործությունից է տրված հատվածը:**

Ու պոետներ, որ չեն պոծել իրենց շուրթերն անեծքով,
Պիտի գովեն քո նոր կյանքը նոր երգերով, նոր խոսքով:

1) «Հայրենիքիս հետ» (Հ. Թումանյան)
2) «Մի՞թե վերջին պոետն եմ ես» (Վ. Տերյան)
3) «Մեր պատմիչները և մեր գուսանները» (Ա. Իսահակյան)
4) «Վահագն» (Ե. Չարենց)

25 **Գ. Զոհրապի ո՞ր նովելից է տրված հատվածը:**

«Հոս՝ քարահատակ ճամփուն վրա, ձիերու շարք մը կը քալե հազիվ լսելի ոտնաձայնով մը …, ամբողջ կարավան մը ծխախոտ փոխադրող շրջակա գեղերեն, ու տասնի չափ տղաք կուգան քովեն հետիոտն, հրացանը ուսերնուն կախած, ատրճանակը մեջքերնին»:

1) «Այինկա»
2) «Զաբուղոն»
3) «Փոստա՛լ»
4) «Այրին»

26 **Նախադասությունները նշող թվերի դասավորության ո՞ր տարբերակն է համապատասխանում տեքստի տրամաբանական և քերականական ճիշտ կառուցվածքին:**

1. Մի օր, երբ անցնում էր մի ապառաժոտ վայրով, նրան փորձում են հափշտակել այլազգի զինյալներ. օրիորդը խաչակնքում է ու ձիու հետ թռչում քարաժայռից, որպեսզի չընկնի նրանց ձեռքը:
2. Ավանդությունն ասում է, որ քամու ուժգին հոսանքով ու աներևույթ զորությամբ իշխանադուստրն անվնաս իջնում է ձորի խորխորատը:
3. Վայոց ձորի ժայռերից մեկը՝ խոր ձորի եզրին կանգնած մի բարձունք, կոչվում է Շահանդուխտի քերծ:
4. Շահանդուխտը, որ իշխանի դուստրն էր, հրաշագեղ էր, չնաշխարհիկ. նրա գեղեցկությունը զարմանք էր պատճառում տեսնողներին:

1) 3, 4, 1, 2
2) 4, 1, 2, 3
3) 3, 1, 4, 2
4) 4, 2, 3, 1

27 **Տրվածներից որո՞ւմ Հ. Թումանյանի «Թմկաբերդի առումը» պոեմի բովանդակության վերաբերյալ սխալ *չկա:***

1) Թաթուլ իշխանը մատնության գիշերը երազում տեսնում է, որ Թմկաբերդը հիմնահատակ քանդվել է:
2) Մահամերձ Թաթուլը կնոջ մատնության մասին իմանում է վերջին պահին, երբ իր զինվորների մեծ մասն արդեն սպանված էր:
3) Մատնությամբ բերդը գրաված շահը հասկանում է, որ կյանքում բախտ, փառք և հաղթություն հաստատ չեն, և պետք չէ հավատալ կյանքում ոչ մեկին:
4) Պոեմն սկսվում է «Գործն է անմահ, լա՛վ իմացեք» տողով:

28 **Պ. Դուրյանի ո՞ր բանաստեղծությունից են հետևյալ տողերը.**

Որքան ունիս դու փրփուր,
Սիրտս այնքան խոց ունի բյուր:

1) «Սիրել»
2) «Տրտունջք»
3) «Լճակ»
4) «Իմ ցավը»

29 **Ա. Շիրվանզադեի «Քառս» վեպի ո՞ր հերոսի խոսքն է.**

«19-րդ դարը, սիրելի՛ս, խաբեության դար է, իսկ այդ դարը դեռ չի վերջացել: Այժմ խաբում են ամենքը, և ամենից ավելի նրանք, որոնք ըմբոստանում են խաբեության դեմ»:

1) Սմբատի
2) Միքայելի
3) Իսահակ Մարութխանյանի
4) Մարկոս աղա Ալիմյանի

30 **Ա. Բակունցի «Խոնարհ աղջիկը» պատմվածքի հերոսը մերժում է Խոնարհի հոր՝ ճաշին իրենց տուն գնալու հրավերը՝**

1) խոստանալով այցելել մեկ ուրիշ անգամ:
2) պատճառ բռնելով գրքի ընթերցանությունը:
3) պատճառաբանելով, որ այդ օրը պետք է քաղաք մեկնի:
4) ասելով, որ արդեն ճաշել է:

31 **Տրված հատվածը Հ. Սահյանի ո՞ր բանաստեղծությունից է:**

Նստում էին և սպասում,
Մինչև պապը գար,
Մինչև բակում Ծաղիկ եզան
Զանգը ծլնգար:

1) «Քարափը»
2) «Անտառում»
3) «Օրը մթնեց»
4) «Անունդ տալիս»

32 **«Սասնա ծռեր» էպոսի («Սասունցի Դավիթ» համահավաք բնագիր) բովանդակության վերաբերյալ ո՞ր պնդման մեջ սխալ *չկա:***

1) Մեծ Սիերը և Մըսրա Մելիքը պայման են կապում, որ ով հաղթի մենամարտում, նա դառնա և՛ Սասունի, և՛ Մըսրա թագավոր:
2) Դավիթը կոտորում է Մըսրա Մելիքի բանակը, և Մելիքը սարսափահար փախչում է:
3) Փոքր Սիերը ծնվում է՝ ձեռքի ափում մի կաթիլ արյուն սեղմած:
4) Ծովինարի խորհրդով իրենց կառուցած ամրոցը Սանասարն ու Բաղդասարը անվանում են Սասուն:

33 **Նախադասության անդամներից որո՞նց շարահյուսական վերլուծությունն է ճիշտ:**

Ամառային գիշեր էր. Ոսկանը անցավ հյուսիսային պարսպի մոտով և կանգ առավ մի խրճիթի մոտ, որ մյուսներից փոքր-ինչ ավելի բարեկարգ էր, և որում պայծառ լույս էր վառվում:

1. **լույս** – ուղիղ խնդիր
2. **մյուսներից** – ներգործող խնդիր
3. **փոքր-ինչ** – չափի պարագա
4. **որ** – ենթակա
5. **կանգ առավ** – բաղադրյալ ստորոգյալ
6. **պարսպի** – հատկացուցիչ

34 **Ո՞ր բառերում մեկից ավելի հնչյունափոխություն կա:**

1. հետաքննություն, 2. աստղադիտարան, 3. մեղվաբուծություն, 4. մանրախնդրություն, 5. ուղղամտորեն, 6. ահագնանալ, 7. ծաղկաշղթա, 8. հանդգնել

35 **Ո՞ր բառերն են միմյանց հոմանիշ:**

1. մկունդ, 2. սաղավարտ, 3. դարան, 4. որոգայթ, 5. շառափ, 6. ականատ, 7. թակարդ, 8. կառափ

36 **Ո՞ր նախադասություններում կապ *չկա:***

1. Նա, ըստ այդ որոշման, պետք է հանդիպեր նրան որևէ չեզոք տեղում և հասցներ ագարակ:
2. Հասկանալի էր, որ ինձ վիճակված չէր նման պայմաններում հանգիստ խղճով զբաղվել իմ գործով:
3. Բայց սովորաբար նա ինձ մոտ է գիշերում. այս երեկո եթե վաղ գա, հենց այս գիշերվա գնացքով կճանապարհեմ:
4. Չիմացա՝ ինչպես ճաշեցի, որովհետև ինձ շատ էր հետաքրքրում այն տեսակցությունը, որ պիտի ունենայի Սառայի հետ:
5. Դու, մա՛յր Արաքս մեր քերթության, Ա՛ռ ինձ գիրկդ, տա՛ր ինձ հեռու:

37 **Ո՞ր նախադասություններում է շաղկապը կապել նախադասության անդամներ (նախադասությունները կետադրված չեն):**

1. Չեկա և չիմացա ոչինչ:
2. Կին թե տղամարդ դուրս էին եկել տներից:
3. Այդ ներկայացումը ծնվել էր թախծից գուցե սիրուց բայց ոչ սին հպարտությունից:
4. Միլիոնատիրոջ և աղքատ աղջկա միջև չի կարող լինել ոչ մի առնչություն:
5. Հանկարծ մի լույս ցայտեց և սկսեց պտտվել վանքի խոժոռ պատերին:

38 **Ո՞ր թվերի տեղում բութ պիտի դրվի:**

Արտաշես թագավորի ժամանակ Հայաստանի կյանքը բարեկեցիկ էր երկիրը(1) ծաղկուն էր: Սիրելով իր թագավորին(2) ժողովուրդը նրա կյանքի հետաքրքիր դեպքերը գեղեցիկ զրույցներ դարձրեց: Մովսես Խորենացու գրքում նկարագրված պատմություններից մեկի(3) Արտաշեսի(4) ալանների դեմ մղած պատերազմի նյութը պատմիչը քաղել է Գողթն գավառում(5) այն ժամանակ դեռևս պահպանված երգախառն զրույցներից: Երբ ալանների թագաժառանգը գերի է ընկնում նրա քույրը բարձրանալով Քռի ափին գտնվող մի ժայռի վրա(6) խնդրում է(7) վերադարձնել եղբորը: Արտաշեսը սիրահարվում է ալանների արքայադստերը(8) չկարողանալով վճարել հազարավոր ոսկիներ փախցնում է նրան:

39 **Տրվածներից քանի՞սն են ցուցական դերանուն:**

սույն, միմյանց, որտեղ, ամեն մի, ինչքան, միևնույն, մյուս, ինչպիսի

40 **Բառերից քանիսի՞ բաց թողած տեղում է գրվում *հ:***

արհամար-ել, անշնոր-ք, ամպ-ովանի, խոտ-արք, հայ-ոյանք, հեղ-եղուկ, ընդ-անուր, համ-արզ

41 **Բառազույգերից քանիսի՞ բառերը հականիշներ *չեն:***

փխրուն-պինդ, ճապաղ-թերի, անաչառ-կողմնակալ, հարթ-խորդուբորդ, նահանջել-ընկրկել, էական-անկարևոր, տիվ-ցերեկ, չքանալ-հայտնվել

42 **Նախադասություններից քանիսո՞ւմ են ընդգծվածները միմյանց կապակցված խնդրառությամբ:**

- Լուսաթաթախ սպասումի մեջ ինչ-որ հաճելի **հուզմունք էր ալեկոծել** Մարանին:
- **Սիրում եմ** աչքերիդ **տխրությունը** խորին:
- Այդ վայրկյանին մտքումս **անիծեցի** երջանիկ **երգչուհուն**:
- **Լևոնին հայտնեցի** Լուիզայի ուղևորության մոտալուտ ժամանակը:
- Առանձնացավ ընկերներից ու շարժվեց **դեպի փողոց:**
- **Վեհանիստ լեռան** գագաթը կարծես աննյութական էր:

43 **Նախադասություններից քանիսո՞ւմ հարակատար դերբայ կա:**

- Մայրը ուշադիր հետևում էր, մինչև որ որդին անցավ սառցակալած ճանապարհը:
- Նա գիտակցում էր, որ վաղ թե ուշ պետք է վեր կենա ու երես առ երես նայի իր հետևում կանգնածին:
- Վայրկյաններն անցնում էին, և նա հասկանում էր, որ մոտենում է այն պահը, երբ ինքը հարկադրված վայրէջք պիտի կատարի:
- Ձեյթունը մի բուռ մոխրակույտ է դարձել. հիսուն հոգի են վերադարձել կոտորածից, և քաղաքն ավերակ է:
- Բաժակը, որ արդեն մոտեցրել էր շուրթերին, դրեց սեղանին և դիմեց մեզ անհանգիստ ու հուզված:

44 **Նախադասություններից քանի՞սն են միջին հայերենով:**

- Թույլ շրշյուն մը, հետո բույր մը մշկենի. Եվ համրագին գիրքը ձեռքես կ'իյնա վար:
- Մեծցայ, սիրու տէր եղայ, երեսիս գոյնը կու գընայ. Մանկտի՛ք, ձեր արև՞ն ասեմ, որ սիրուն քարը չի դիմնայ:
- Ձիմ եարն ամանաթ կու տամ. ի վարդին մէջն պահեցէք. Թէ երթամ ու շուտով դառնամ, զամանաթս ի տէ՛ր հասուցեք:
- Ընդ եղեգան փող ծո՛ւխ ելանէր, Ընդ եղեգան փող բո՛ց ելանէր, Եւ ի բոցոյն վազէր խարտեաշ պատանեկիկ:

45 **Տրված 6 պնդումներից յուրաքանչյուրի համար ընտրել *Ճիշտ է, Սխալ է, Չգիտեմ* տարբերակներից որևէ մեկը:**

1. Այն բառերը, որոնք արտահայտում են տարբեր իմաստներ, կոչվում են հականիշներ:
2. Ձայնարկությունները, կապերը և շաղկապները հոմանիշներ չեն ունենում:
3. Նույն երևույթի՝ սաստկության տարբեր աստիճաններ արտահայտող բառերով կարող են հոմանշային շարքեր կազմվել:
4. Հականիշները կարող են լինել նույնարմատ և տարարմատ:
5. Համանուն են այն բառերը, որոնք արտահայտում են նույն կամ նման իմաստներ:
6. Որոշ դարձվածքներ ունեն իրենց հոմանիշ դարձվածքները:

Բ մակարդակ

46 **Համարակալված բառերում բաց թողած տառերը (տառակապակցությունները) պատասխանների ո՞ր շարքում են ճիշտ նշված:**

Աղջամուղջը հետզհետե ան-ացավ(1)՝ իր տեղը զի-ելով(2) արևի շառագույն ճառա-գայթներին: Բնությունը զար-նեց(3): Ծառերի և ծաղիկների սաղար-ներին(4) նստած ցողը մեղմ-րեն(5) գոլորշիացավ, և յուր-ինակ(6) փայլով շողշողաց մուգ կանաչ բուսա-կանությունը: Պ-նված(7) սալորենին նազեց՝ ասես համբույր ուղարկելով ճ-ղերին(8) թառած արագիլներին: Արթնացան նաև ծաղիկները՝ գինարբու-ը(9), սուսա-բարը(10), վարդը:

1) 1-է, 5-ո, 8-յու, 10-ն
2) 2-չ, 3-թ, 7-ճ, 9-կ
3) 1-է, 4-թ, 7-ճ, 9-կ
4) 3-թ, 6-օ, 9-կ 10-ն

47 **Ո՞ր շարքի բոլոր բառերում արմատի հնչյունափոխություն կա:**

1) մրցակարգ, հայրենադավ, վրիպակ
2) վարչակազմ, միջադեպ, վիճահարույց
3) հրակայուն, ձվածեղ, մշակութային
4) փափկակյաց, ձուլածո, որդեսեր

48 **Ո՞ր շարքում համանուն *չունեցող* բառ կա:**

1) անձուկ, փող, թառ
2) խոզուկ, մարտ, խատուտիկ
3) հազար, հանդերձ, կետ
4) կուռ, գառ, աղոտ

49 **Ո՞ր շարքում բառի սխալ բացատրություն կա:**

1) **կոնդակ**-կաթողիկոսի պաշտոնական գրություն, **դարձերես**-թղթի հակառակ կողմը
2) **խաժ**-կապույտին տվող կանաչ, **սուտակ**-կարմիր գույնի թանկարժեք քար
3) **պատրվակ**-մտացածին պատճառ, **խոյակ**-քանդակազարդ սյունագլուխ
4) **ակնակապիճ**-աչքի խոռոչ, **սնգույր**-ոսկեթել կամ արծաթաթել գործվածք

50 **Ո՞ր շարքի բոլոր բառերն են կազմությամբ բարդ:**

1) մրգատու, բերքահավաք, պարահանդես
2) ստրկամիտ, շրջանավարտ, խաղակես
3) օրավուր, սպիտակաթույր, փաստարկ
4) քարանձավ, սառցալեռ, ծաղկաթերթ

51 **Ո՞ր շարքի բառերից ոչ մեկում հոդակապ *չկա:***

1) լայնեզր, հայազգի, դառնանուշ, բարետես
2) ելևէջ, ճենապակի, ծանրաշարժ, բևեռաղվես
3) գահերեց, շողակն, շոգեջեռուցում, ճարտասան
4) ազգուտակ, հեծանիվ, հնավանդ, անախորժ

52 **Ո՞ր շարքի բոլոր բառերն են կազմությամբ պարզ:**

1) աշխույժ, աշտարակ, ավարտ
2) ապահով, ապավեն, տեսակ
3) պարտեզ, ըմպանակ, հրահանգ
4) խրճիթ, լիցք, հրավեր

53 **Ո՞ր շարքում են բոլորը տրված իմաստն արտահայտող խոսքի մասի պատկանող բառեր:**

1) **նյութական** – ամենքը, երբեք, այնքան, տնային
2) **վերաբերմունքային** – իհարկե, բնականաբար, այսինչ, ահա
3) **քերականական** – ի պատիվ, օրոք, քանի դեռ, արդյոք
4) **նյութական** – հոտնկայս, նկատառում, դիմաց, չրխկալ

54 **Ո՞ր նախադասության մեջ պակասավոր բայ *չկա:***

1) Ես ցույց տվի, թե ոչինչ չեմ լսում, այլ միայն կարդում եմ քաջագործությունների մասին գիրքը:
2) Ես չգիտեմ՝ ուր են տանում հեռավոր Ուղիների ժապավեններն անհամար:
3) Ո՞ր աշխարհում ունեմ շատ բան՝ Միտք եմ անում՝ է՞ս, թե՞ էն:
4) Երբ նայում է, որ ափերին ես չկամ, Մոլորվում է Լորագետը ու գնում:

55 **Ո՞ր նախադասության մեջ վերաբերական *չկա:***

1) Բախտը հո չէ՞ր կարող լինել այնքան անողոք, որ իր մեկ լրիվ օրվա չարչարանքն անտեղի անցներ:
2) Հռոդոսում կանգնեցրին Հելիոսի վիթխարի արձանը՝ ի նշան փառահեղ հաղթանակի:
3) Եթե ինչ-որ տեղդ է ցավում, Իսկույն բուժեմ լոկ հայացքո՜վ:
4) Թե կռիվը անխուսափ է, Թող չկռվեն երկու երկիր, այլ մարդ ու կին:

56 **Ո՞ր տարբերակում բաղադրյալ ժամանակաձև կա:**

1) զգալ կտա, եփեցինք-թափեցինք
2) դուրս եկավ, մի՛ վարանիր
3) կանգ էր առել, չպիտի լսես
4) թույլ մի՛ տուր, սիրտ արեց

57 **Ո՞ր տարբերակում ենթադրական եղանակի բայաձև կա:**

1) Կապտավուն սարերն այնքան մոտ, այնքան պարզ էին երևում, որ հեռվից կարելի էր համրել նրանց մաքուր լանջերի բոլոր ձորակները:
2) Լառ-Մարգարը, ծիրանուտի տակ պառկած, ցերեկվա շոգին ծիրանի ճյուղերի արանքով կնայեր երկնքի կապույտին:
3) Առաջին հայացքից կարծես թե հանցանքը մատնող որևէ նշան չէր կարող երևալ:
4) Ինձ թվում էր, որ այդ նավերով գնացողները պիտի խղճան մնացողներին՝ որպես բախտից զրկվածների:

58 **Ո՞ր նախադասության մեջ որոշիչ հողի գործածության սխալ *չկա:***

1) Կանչենք այն մարդկանց, որոնք սպասում են իրենց մրցանակներին, պարգևներին կամ որևէ այլ նվերին:
2) Ամռան երկար օրերին էլ արևն հազիվ մի քանի ժամ է լույս տալիս Մթնաձորի անտառներին:
3) Միայն մեկ վայրկյան շոշափեց միրհավի տաք մարմինը, և մատներն զգացին, որ բմբուլը անասելի փափուկ է:
4) Հանկարծ քույրն երևաց, ինձ տեսավ և կարծեց, թե հանդիմանելու եմ ուշացման համար:

59 **Ո՞ր տարբերակում դերբայական դարձված կա:**

1) Լաց լինող երեխան մորն էր կորցրել:
2) Ընկնելով ու վեր կենալով շարունակում էին երթը:
3) Կարտոֆիլը հետիոտն զառիվերը բարձրացնելը իսկապես անմտություն է:
4) Պահակը գույնը գցած վազում էր շինության պարսպի երկայնքով:

60 **Ո՞ր նախադասության մեջ է ընդգծվածը տեղի պարագա:**

1) Առավոտյան մենք ագարակների վաճառքի գործակալության <u>տիրուհու մոտ</u> գնացինք, որն իր կարծիքը հրամցրեց գյուղի տների մասին:
2) Ես կուզեի արևավառ <u>անապատը</u> ամայի, ուր մեն-մենակ ու վշտահար թափառեի ու լայի:
3) <u>Տեղը տեղին</u> վճարելով վարորդին՝ իջավ մեքենայից:
4) Գյուղից ներքև՝ <u>մի բարձր ժայռի մոտ</u>, գետն արմունկ է կազմում ու կորչում քարերի արանքում:

61 **Ո՞ր նախադասության մեջ բաղադրյալ ստորոգյալ *չկա:***

1) Սիրտը նույնպես խաբվում է, ինչպես և բանականությունը. նրա մոլորությունը ոչ պակաս կորստաբեր է:
2) Առաջինները նրանք են, ովքեր կարողանում են ամեն ինչ ճեղքել:
3) Պայծառ աշխարհում կլինենք մենակ, Ցավ կյանքի մեռնող լույսերից խաբված:
4) Ընդմիջումից հետո հանդեսի երկրորդ մասը պիտի սկսվեր մի բանաստեղծությամբ, որ Խոնարհի քույրն էր արտասանելու:

62 **Ո՞ր նախադասության մեջ շարադասության սխալ կա:**

1) Նավաբեկությանը վերաբերող իրավունքը միջազգային իրավունքի հին կետ է, ըստ որի՝ նավաբեկության հետևանքով ափ նետված կամ մերձափնյա մասում հայտնաբերված ողջ գույքը համարվում է առափնյա տարածքի գերիշխանի սեփականությունը:
2) Եվրոպան շատ խիտ բնակեցված տարածաշրջան է. այստեղ կան բազմաթիվ բարձր արդյունաբերություն ունեցող զարգացած պետություններ:
3) Աֆրիկյան արշավանքի ժամանակ Կեսարը նավից իջնելուց հետո սայթաքեց, վայր ընկավ ու ամենևին չկորցնելով իրեն՝ ամուր գրկեց հողը և հանդիսավոր հայտարարեց. «Դու իմ ձեռքերում ես, Ա՛ֆրիկա»:
4) Մարդն իր ամբողջ կյանքի ընթացքում կատարում է մոտ 700 միլիոն շնչառական գործողություն, և շնչառական ուղիներ թափանցող օդն ամենուրեք հանդիպում է լորձապատ մակերևույթի:

63 **Ո՞ր նախադասության մեջ ընդգծվածներից ոչ մեկը որոշիչ *չէ:***

1) Հեքիաթդ **անվերջ** օրորում, Իլիկդ խոսում է **անուշ**:
2) Ու զանգերն այն լալագին **Մեռնող** իմ երկրում Չեն հուզելու քո հոգին **Տխրությամբ** անհուն:
3) Նորից կթողնեմ քաղաքն **աղմկոտ** Ու ճամփա կընկնեմ հավետ **միայնակ**:
4) **Բոլոր** ահերն ինձնից վանում, **Պարզ** եմ նայում ապագային:

64 **Ո՞ր նախադասության մեջ կետադրական սխալ կա:**

1) Միայն որոշ նրբագեղ կանայք են, որոնք կանացի բազում հնարքներ օգտագործելով՝ կարողանում են իրենց պահվածքը խոսեցնել, և այդ անելու յուրօրինակ միջոցները միայն իրենց են հայտնի:
2) Գիշերը անքուն թափառեց Ադամը՝ երգելով իր ցավագին կարոտը, և անհուն կսկիծից փոթորկվեց սիրտը:
3) Բացված ձեռագրի մի կեսը, թվում է, կապույտ ստվերի մեջ է, մյուսը՝ երկաթյա եռաժանի մոմակալի դեղնակարմիր կայծկլտուքների տակ, և նրա վրա նշմարվում են նոտրագիր տողերը:
4) Եվ ամեն օր հոգու թրթիռով նայում էր աշխարհին և ամեն օր զարմանում այնպես, որ թվում էր՝ առաջին անգամ էր տեսնում աշխարհը:

65 **Մ. Մեծարենցի ո՞ր բանաստեղծությունից է տրված հատվածը:**

Թույլ շրշյուն մը, հետո բույր մը մշկենի.
Եվ համրագին գիրքը ձեռքես կ՚իյնա վար…

1) «Աքասիաներու շուքին տակ»
2) «Արևին»
3) «Սիրերգ»
4) «Վայրկյան»

66 **Ո՞ր շարքում կա ստեղծագործություն, որի հեղինակը Ե. Չարենցը *չէ:***

1) «Տաղ անձնական», «Մահվան տեսիլ»
2) «Անվերնագիր», «Անակնկալ հանդիպում Պետրոպավլովյան ամրոցում»
3) «Գանգրահեր տղան», «Մի՛ խառնեք մեզ ձեր վայրի արջի ցեղերին»
4) «Դանթեական առասպել», «Ես իմ անուշ Հայաստանի»

67 **Ո՞ր նախադասություններում վերաբերության անուղղակի խնդիր կա:**

1. Խոսում էինք մեր անցյալ օրերից, լավ հիշողություններից: 2. Մեկը իր տեսած երազն էր պատմում, մյուսը՝ տնից ստացած տեղեկությունները: 3. Ապա զրուցում էինք մեր ճանապարհորդությունների, մանկության, սիրո, արկածների շուրջ: 4. Յուրաքանչ-յուր ոք աշխատում էր սփոփել մյուսին: 5. Երբ դրսից մեկը մի բան էր ստանում՝ ծխախոտ, շաքար, միրգ, իսկույն սիրով բաժին էր հանում ուրիշներին: 6. Բոլորս միմյանց վերաբերվում էինք սիրով ու հարգանքով:

68 **Համարակալված բառերից որո՞նք են ածական:**

Չեմ սիրում այդ երաժշտությունը. 1. **դաժան** է այն: Նայում եմ մյուսներին. ոմանք նստել են 2. **անտարբեր** հայացքով, ոմանք՝ 3. **ներանձնացած**: 4. **Ամեն** մարդ 5. **զոց** աշխարհ է՝ անիմանալի ու 6. **անմատույց**: Տարիներ հետո ոչ ոք չի մնալու այս 7. **ապրող** բազմությունից: Բայց աշխարհը 8. **տակավին** իմն է ու ձերը:

69 **Ո՞ր մտքերն են բխում տեքստի բովանդակությունից կամ *չեն* հակասում նրան:**

16 երկրներից հավաքված 250 հոգանոց գիտական մի ընկերություն զբաղվում է գիտության համեմատաբար նոր բնագավառով՝ մումիաների արտաշիրմումով, ինչի նպատակը դրանք բժշկական քննության ենթարկելն է: Յուրաքանչյուր անգամ հանդիպումը կայանում է այդ երկրներից որևէ մեկում: Խմբի վերջին հանդիպումներից մեկը կայացել է Դետրոյտում: Այս անգամ ուսումնասիրության առարկան մի եգիպտուհու մումիա էր՝ շիրիմված 2000 տարի առաջ: Հետազոտության ընթացքում քննվեցին բոլոր օրգանները՝ բացի ուղեղից. այս մումիայի գանգում այն բացակայում էր, սակայն գանգն անվնաս էր: Կա տեսակետ, ըստ որի՝ մինչ բալզամացումը եգիպտացիները ուղեղը հեռացրել են քթանցքերով, ապա ամբողջ մարմինը ծածկել են քսան շերտ հեշտ ներծծվող կտորով և պատել սոդայագիպսով հագեցած խյուսով:

Բազմաթիվ մումիաների քննությունից պարզվել է, որ հնագույն ժամանակներում նույնպես մեծ տարածում են ունեցել այսօր մարդկությանն անհանգստացնող սրտանոթային, հոդային հիվանդությունները, իսկ ռենտգենոսկոպիկ սարքերը փաստեցին ողնաշարային ախտերի տարածվածության մասին:

1. Ռենտգենոսկոպիկ սարքերով ուսումնասիրությամբ պարզվել է, որ հնադարում ողնաշարային տարբեր հիվանդությունները բոլոր ախտերից ամենատարածվածն են եղել:
2. Մումիաների ուսումնասիրությունները փաստում են, որ հին ու նոր ժամանակների մարդիկ հաճախ տառապել են միևնույն հիվանդություններով:
3. Կա տեսակետ, որ մինչ բալզամացումը պարտադիր պայման է եղել մահացածի քթանցքերով ուղեղի հեռացումը:
4. Դետրոյտը եգիպտական մումիաների մերօրյա հետազոտությունների կենտրոնն է:
5. Վերջին հանդիպման ժամանակ հետազոտված մումիան բալզամացվել էր բոլոր օրգաններով հանդերձ՝ բացի ուղեղից:

70 **Տրված 6 պնդումներից յուրաքանչյուրի համար ընտրել *Ճիշտ է, Սխալ է, Չգիտեմ* տարբերակներից որևէ մեկը:**

1. Ներգոյական հոլովը կազմվում է ***ում*** վերջավորությամբ կամ ***սեռական հոլով+մեջ կապ*** կապակցությամբ:
2. Ոչ բոլոր գոյականներն են գործածվում ներգոյական հոլովով:
3. Ժամանակի պարագան կարող է դրվել ներգոյական հոլովով:
4. Ներգոյական հոլովով դրված բառը կարող է գործածվել կապերի հետ:
5. ***Ով*** դերանունը ներգոյական հոլովի ձև չունի:
6. Ներգոյական հոլովով դրված գոյականը կարող է համանունություն կազմել նույնարմատ անկատար ձևաբայի հետ: